ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՌՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՆԵՐԱԼԻՍՍԻՄՈՒՍ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ

*Ս. Էջմիածնի Համազգային Եկեղեցական Ժողովը պատմական խոշոր նշանակություն ունեցող երկու հեռագիր է հղել ՍՍՌ Միության ժողովուրդների մեծ առաջնորդ գեներալիսիմուս ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ։ Համազգային Եկեղ. Ժողովը առաջին հեռագրի մեջ, որ հղել է իր աշխատանքների սկզբին, գոհունակությամբ նշում է հայկական պետականության ստեղծումը շնորհիվ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻ, հայ ժողովրդի մեծագույն բարեկամի։ Երկրորդ հեռագրում, որ հղվել է աշխատանքների ավարտումից հետո, Եկեղեցական Ժողովը իր երախտագիտական անհուն զգացմունքն է արտահայտում այն հնարավորությունների ու ամենալայն աջակցության առթիվ, որ շնորհել է Միության Կառավարությունը Համազգային Եկեղեցական Ժողովին իր պարտականությունները կատարելու համար։*

*Մոսկվա, Կրեմլ*

## ՍՍՌՄ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՐՇԱԼ ՍՏԱԼԻՆԻՆ

*Այսօր մենք, Սովետական Միության և արտասահմանյան երկրների հավատացյալ հայության ներկայացուցիչներս հավաքվելով Ս. Էջմիածնի դարավոր կամարների տակ, անցնում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և եկեղեցական մի շարք հարցերի լուծման մեր աշխատանքին։*

*Մենք լավ հասկանում ենք, որ առանց Ձեր բարեհաճ վերաբերմունքի հայ եկեղեցու համար պատմական առաջնակարգ նշանակություն ունեցող այս իրադարձությունները կլինեին անիրականանալի։ Այս օրերը ամենաերջանիկ օրեր են հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ, երբ Մեծ Միությունը, որի իրավահավասար անդամներից մեկն է Սովետական Հայաստանը, այս համաշխարհային ավերիչ պատերազմից չտեսնված հաղթանակով դուրս եկավ Ձեր հանճարեղ ղեկավարության շնորհիվ, ՍՍՌՄ ժողովուրդների, մասնավորապես ռուս մեծ և վեհանձն ժողովրդի հերոսական ջանքերի շնորհիվ։ Եվ առաջին զգացմունքը, որ տոգորում է մեզ, Սովետական Միության և արտասահմանի հայության պատգամավորներին, դա երախտագիտության և շնորհակալության զգացմունքն է դեպի Ձեզ, հայ ժողովրդի մեծագույն բարեկամին։*

*Ձեր շնորհիվ իրականացված է հայ ժողովրդի ազատագրությունը ու հայկական պետականության վերածնումը և մենք հաստատ հավատացած ենք, որ Ձեր օժանդակությամբ կիրականանան ճնշման ու հալածանքների հետևանքով տարագիր դարձած արտասահմանյան հայերի իղձերը և նրանք կվերադառնան իրենց Հայրենիքը՝ Սովետական Հայաստան։*

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Կիլիկիո Տանն Կաթողիկոս ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ

Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԵՈՐԵՔՉՅԱՆ

Երուսաղեմի Պատրիարք ԿՅՈՒՐԵՂ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՆԻԿ ՉԱԳՐ

ՀՍՍՌ Գիտութ. Ակադեմիայի իսկական անդամ ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀՍՍՌ Գիտութ. Ակադեմիայի իսկական անդամ ԱԿ. ԻՍԱՀԱԿՅԱՆ